# Մոբայլ Բանկ

## Հավելվածի ներբեռնումը

1. Փնտրեք «HSBC Mobile Banking» App store[SM] / GooglePlay[TM] հարթակներում
2. Ներբեռնեք հավելվածը
3. Կարդացեք և ընդունեք հավելվածի օգտագործման պայմանները (End User License Agreement)
4. Հավելվածը գործարկելուց հետո ընտրեք Հայաստանը երկրների ցանկից և Ձեր նախընտրած լեզուն
5. Կարդացեք և ընդունեք Էյչ-Էս-Բի-Սի Մոբայլ Բանկային համակարգի Պայմանները
6. Մոբայլ հավելվածը պատրաստ է օգտագործման




## Մուտք անվտանգության սարքով

1. Սեղմեք «Մուտք» կոճակը հավելվածի Գլխավոր էջից
2. Մուտքագրեք Ինտերնետային բանկային համակարգի Ձեր Օգտագործողի անունը (եթե գրանցված չեք Էյչ-Էս-Բի-Սի Բանկի Ինտերնետային բանկային համակարգում, ապա նախ պետք է գրանցվել)
3. Սեղմեք «Անվտանգության սարք» կոճակը եթե արդեն ստեղծել եք Մոբայլ գաղտնաբառ, այնպես Օգտագործողի անունը առաջին էջում մուտքագրելուց հետո հաջորդ էջում մուտքագրեք Հիշվող պատասխանը և Անվտանգության սարքի կողմից գեներացված ծածկագիրը
4. Մուտքագրեք Ինտերնետային բանկային համակարգի Հիշվող պատասխանը և Անվտանգության ծածկագիրը



## Հաշիվներ

1. Ընտրեք Մոբայլ Բանկ -> Հաշիվներ ձախակողմյան մենյուից
2. Ինտերնետային բանկային համակարգում ընտրված բոլոր հաշիվները կցուցադրվեն: Որևէ հաշվի պատմությունը դիտելու համար սեղմեք հաշվի անվանման վրա
3. «Հաշվի պատմության» էջից սեղմեք հաշվեհամարին
4. Հաշվի մանրամասները կցուցադրվեն




## Վճարումներ

1. Ընտրեք Մոբայլ Բանկ -> Գործարքներ ձախակողմյան մենյուից
2. Ընտրեք Շահառուի հաշվեհամարը սեղմելով «Շահառու» դաշտի վրա: Ցանկում առկա են միայն այն շահառուները, որոնք Դուք ավելացրեք եք Ինտերնետային Բանկային համակարգում
3. Մուտքագրեք գումարը և այլ մանրամասներ: Դուք կարող եք ընտրել կատարել վճարումը հիմա կամ ապագա ամսաթվին
4. Ստուգեք մուտքագրված մանրամասները «Ստուգել» էջում և սեղմեք «Հաստատել Վճարումը» կոճակը շարունակելու համար
5. Եթե վճարման գումարը գերազանցում է 50,000 ՀՀ դրամը, ապա համակարգը կպահանջի մուտքագրել 3 պատահական նիշ Ձեր Մոբայլ գաղտնաբառից կամ Ձեր անվտանգության ծածկագիրը՝ կախված ինչ վավերապայմանով եք մուտք գործել
6. «Հաստատում» էջում կցուցադրվի վճարման մանրամասները



## Այլ HSBC հաշիվներին

1. Ընտրեք Մոբայլ Բանկ -> Փոխանցումներ ձախակողմյան մենյուից: Բոլոր հիշված փոխանցումները (եթե ունեք) կցուցադրվեն
2. Սեղմեք «+» կոճակը նոր փոխանցում կատարելու համար
3. Սեփական հաշիվների միջև փոխանցումների էջը կբացվի: Ընտրեք «Ստացողը HSBC Բանկում» փոխանցման տեսակը: Համապատասխան էջը կբացվի
4. Ուղարկող հաշիվն ընտրելուց հետո սեղմեք «Ստացող» դաշտին
5. Կբացվի նոր էջ: Մուտքագրեք Էյչ-Էս-Բի-Սի հաշվեհամարը, որին ցանկանում եք կատարել փոխանցում և ընտրեք արժույթը
6. Բոլոր անհրաժեշտ դաշտերը ինչպես նաև Գործարքի հաստատման ծածկագիրը մուտքագրելուց հետո սեղմեք «Փոխանցել» կոճակը
7. Ստուգեք մուտքագրված մանրամասները «Ստուգել» էջում և սեղմեք «Հաստատել Փոխանցումը» կոճակը շարունակելու համար
8. «Հաստատում» էջում կցուցադրվի փոխանցման մանրամասները



## Ստացողը ՀՀ-ում

1. Ընտրեք Մոբայլ Բանկ -> Փոխանցումներ ձախակողմյան մենյուից: Բոլոր հիշված փոխանցումները (եթե ունեք) կցուցադրվեն
2. Սեղմեք "«+» կոճակը նոր փոխանցում կատարելու համար
3. Սեփական հաշիվների միջև փոխանցումների էջը կբացվի: Ընտրեք «Ստացողը ՀՀ-ում» փոխանցման տեսակը: Համապատասխան էջը կբացվի: Ուղարկող հաշիվ ընտրելուց հետո սեղմեք «Ստացող» դաշտի վրա
4. Կբացվի նոր էջ, համապատասխան ենթաէջերով մուտքագրելու Շահառուի վերաբերյալ մանրամասները՝ Շահառուի անուն/անվանում, Բանկի անուն կամ Կոդ ինչպես նաև Շահառուի հաշվեհամարը
5. Ընտրեք «Փոխանցել հիմա» տարբերակը կամ ապագա ամսաթիվ, մուտքագրեք Գործարքի հաստատման ծածկագիրը և սեղմեք «Փոխանցել» կոճակը
6. Ստուգեք մուտքագրված մանրամասները «Ստուգել» էջում և սեղմեք «Հաստատել Փոխանցումը» կոճակը շարունակելու համար
7. «Հաստատում» էջում կցուցադրվի փոխանցման մանրամասները



## Ստացողը ՀՀ-ից դուրս

1. Ընտրեք Մոբայլ Բանկ -> Փոխանցումներ ձախակողմյան մենյուից: Բոլոր հիշված փոխանցումները (եթե ունեք) կցուցադրվեն
2. Սեղմեք «+» կոճակը նոր փոխանցում կատարելու համար
3. Սեփական հաշիվների միջև փոխանցումների էջը կբացվի: Ընտրեք «Ստացողը ՀՀ-ից դուրս» փոխանցման տեսակը: Համապատասխան էջը կբացվի
4. Ուղարկող հաշիվ ընտրելուց հետո սեղմեք «Ստացող» դաշտը
5. Կբացվի նոր էջ Երկրների ցանկով: Ընտրեք երկիրը ուր ցանկանում եք կատարել փոխանցումը
6. Կբացվի նոր էջ՝ տվյալ երկրի համար հասանելի քաղաքների ցանկով: Ընտրեք քաղաքը
7. Կբացվի նոր էջ համապատասխան բանկերի անուններով
8. Մյուս էջում անհրաժեշտ է մուտքագրել Շահառուի անվանումը, հաշվեհամարը և փոխանցվող գումարի արժույթը
9. Փոխանցման հիմնական էջում մուտքագրեք բոլոր անհրաժեշտ դաշտերը
10. Գործարքի հաստատման ծածկագրի և այլ անհրաժեշտ դաշտերը լրացնելուց հետո «Փոխանցել» կոճակը կակտիվանա
11. Ստուգեք մուտքագրված մանրամասները «Ստուգել» էջում և սեղմեք «Հաստատել Փոխանցումը» կոճակը շարունակելու համար
12. «Հաստատում» էջում կցուցադրվի փոխանցման մանրամասները



## Ավանդներ

1. Ընտրեք Մոբայլ Բանկ -> Գործարքներ -> Ավանդներ ձախակողմյան մենյուից
2. Ժամկետային ավանդի էջը կցուցադրվի
3. Ժամկետային ավանդի էջում ընտրեք ավանդի տեսակը
4. Ընտրեք ժամկետային ավանդի արժույթը
5. Ընտրեք ելքագրվող հաշիվը
6. Ընտրեք Ավանդի ժամկետը
7. Մուտքագեք ժամկետային ավանդի գումարը
8. Ստուգեք մուտքագրված մանրամասները «Ստուգել» էջում և սեղմեք «Հաստատել Ավանդը» կոճակը շարունակելու համար
9. Հաստատում էջում կցուցադրվի գործարքի մանրամասները



# Փոստարկղ

**Փոստարկղ**

1. Ընտրեք Փոստարկղ -> Յաղորդագրություններ ծախակողմյան մենյուից
2. Ընտրեք հաղորդագրությունը կարդալու համար: Ձեր Փոստարկղում գտնվող հաղորդագրությունները (առկայության դեպքում) կցուցադրվի
3. Դուք կարող եք պատասխանել հաղորդագրությանը համապատասխան կոճակը սեղմելով
4. Էյչ-Էս-Բի-Սի Բանկին նոր հաղորդագրություն ուղարկելու համար սեղմեք համապատասխան կոճակը
5. Նոր հաղորդագրության էջը կցուցադրվի: Բացվող ցանկից ընտրեք Ձեր հաղորդագրության թեման, մուտքագրեք հաղորդագրությունը և սեղմեք համապատասխան կոճակը՝ հաղորդագրությունն ուղարկելու համար




Թարմացվել է՝ 18/01/2019 15:00